

Luys Lnyu®



ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ
ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ


ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ 2019Թ. ՀՈՒՆՎԱՐ ԱՄՍՎԱ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

**Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշը, կուտակային,
2018-2019թթ., %**




Տնտեսական ակտիվության ցուցանիշը 2019թ. հունվար ամսին կազմել է 6.1 տոկոս, որը 5.5 տոկոսային կետով ավելի ցածր է, քան նախորդ տարվա աճը:

Տնտեսական ակտիվության ցուցանիշի աճին առավելապես նպաստել է ծառայությունների ոլորտը (7.2 տոկոսային կետով): Աճին նպաստել են նաև առևտրի (2.3 տոկոսային կետ) և շինարարության (1.6 տոկոսային կետ) համախառն թողարկման իրական աճերը: ՏԱՑ-ի աճին բացասաբար է նպաստել արդյունաբերությունը՝ 0.1 տոկոսային կետով (տե՛ս Գծապատկեր 2):

Գյուղատնտեսության աճը այսուհետ հրապարակվելու է միայն եռամսյակային պարբերականությամբ՝ պայմանավորված գյուղատնտեսական արտադրանքի արտադրության սեզոնայնությամբ և բնակլիմայական ոչ կայուն պայմաններից կախված ամսական արտադրության տատանողականության համահարթեցման


անհրաժեշտությամբ¹: Գծապատկեր 2-ում գյուղատնտեսության նպաստումը ՏԱՑ-ին ներկայացված է մնացորդային տեսքով և կազմում է -5 տոկոսային կետ: Հարկ է նշել, որ բացի գյուղատնտեսությունից, այս -5 տոկոսի մեջ ներառված է նաև հաշվարկային շեղումը: Հետևաբար, գյուղատնտեսության հստակ նպաստումը հնարավոր կլինի հաշվարկել եռամսյակային պարբերականությամբ:

Գծապատկեր 2. Տնտեսության ակտիվության ցուցանիշը և ճյուղերի նպաստումները, 2019թ. հունվար, %



ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Գծապատկեր 3. Արդյունաբերության համախառն թողարկման իրական կուտակային աճը, 2018-2019թթ., %




¹ ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող ընթացիկ-օպերատիվ ամփոփմամբ ստացված նախնական հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները 2019թ. հունվարին (2019թ. փետրվարի 25-ի դրությամբ):

2019 թվականի հունվարին արդյունաբերության թողարկման ինդեքսը նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ նվազել է 0.4 տոկոսով: 2018թ. հունվարին նույն ցուցանիշը կազմել էր 13.9 տոկոս:

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Գծապատկեր 4. Շինարարության իրական կուտակային աճը, 2018-2019թթ., %




Շինարարության ծավալի աճը 2019թ. առաջին ամսին կազմել է 22.1 տոկոս, ինչը 2.4 տոկոսային կետով ավելի բարձր է, քան նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը:

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ


Տնտեսության կառուցվածքում նախորդ տարվա ամենաարագ աճող ճյուղը՝ ծառայությունները, 2019թ. առաջին ամսին 2018թ. հունվարի նկատմամբ աճել է 15.6 տոկոսով, որը շատ մոտ է նախորդ տարվա ցուցանիշին (15.0%):

Գծապատկեր 5. Ծառայությունների իրական կուտակային աճը, 2018-2019թթ., %



ԱՌԵՎՏՈՒՐ


Գծապատկեր 6. Առևտրի ծավալների իրական կուտակային աճը, 2018-2019թթ., %



Առևտրի շրջանառության աճի տեմպը նույնպես ընթացիկ տարվա հունվար ամսին եղել է ավելի բարձր, քան նախորդ տարի: Աճը նախորդ տարվա հունվարի նկատմամբ կազմել է 19.3 տոկոս՝ գերազանցելով ծառայությունների ոլորտի աճի ցուցանիշը:

ԱՐՏԱՀԱՆՈՒՄ

Գծապատկեր 7. Արտահանման կուտակային աճ, 2017-2018թթ., %²




* Ներկայացված են 2018 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսների արտաքին առևտրի վերանայված տվյալները:

2019 թվականի հունվարին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ արտահանման ծավալը նվազել է 15.8 տոկոսով: Անկման պատճառներից կարող է լինել բազային էֆեկտը, քանի որ նախորդ տարվա նույն ցուցանիշը բավական բարձր է եղել և կազմել 36.8 տոկոս: Նվազման ավելի հստակ պատճառները կարելի է հասկանալ ըստ ապրանքատեսակների և ըստ երկրների արտահանման ծավալների տվյալներն ունենալու դեպքում, որը հասանելի կլինի մարտի սկզբին:

ՆԵՐՄՈՒԾՈՒՄ

Գծապատկեր 8. Ներմուծման կուտակային աճ, 2018-2019թթ., %




Ինչպես արտահանումը, այնպես էլ ներմուծումը, նախորդ տարվա բավական բարձր աճի ցուցանիշից հետո, ընթացիկ տարվա առաջին ամսում գրանցել է անկում՝ 3.3 տոկոսով: Այստեղ նույնպես անկումը կարող է պայմանավորված լինել բազային էֆեկտով:

ԱՇԽԱՏԱՎԱՐՁ

2019թ. հունվարին նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 4.1 տոկոսով: Ընդ որում՝ պետական հատվածում աշխատավարձն աճել է 6.5 տոկոսով, իսկ մասնավոր հատվածում՝ 1.8 տոկոսով: Նախորդ տարվա համապատասխան ցուցանիշները կազմել են 5.0, 3.1 և 5.3 տոկոս:


**Գծապատկեր 9. Միջին ամսական անվանական աշխատավարձի աճը³,
2018-2019թթ., %**



³ Աշխատավարձի ցուցանիշները ներկայացված են 1 և ավելի աշխատող ունեցող կազմակերպությունների վերանայված տվյալներով:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃ (2018թ. հունվար-դեկտեմբեր)

Գծապատկեր 10. Համախառն ներքին արդյունքի իրական աճը և ճյուղերի նպաստումները, 2017-2018թթ., %



Համախառն ներքին արդյունքն իրական արտահայտությամբ 2018թ. առաջին երկու եռամսյակների արդյունքում դրսևորում էր ավելի բարձր աճի տեմպ, քան

2017 թվականին, սակայն երրորդ եռամսյակում աճը դանդաղել է, և 2018թ. հունվար-սեպտեմբեր ամիսների աճը հավասարվել է նախորդ տարվա աճին: Չորրորդ եռամսյակում տնտեսական ակտիվության տեմպը նույնպես չի վերականգնվել, ինչի արդյունքում, տնտեսական աճը 2.3 տոկոսային կետով ավելի ցածր է եղել՝ կազմելով 5.2 տոկոս:

ՀՆԱ-ի աճին մեծապես նպաստել է ծառայությունների ոլորտը: Այսպես՝ 2018թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ իրական ՀՆԱ-ի 5.2 տոկոս աճին ծառայությունների ոլորտը նպաստել է 4.0 տոկոսային կետով: Դրական նպաստում ունեցող ճյուղերն են եղել նաև առևտուրը և արդյունաբերությունը՝ համապատասխանաբար 1.0 և 0.7 տոկոսային կետերով: ՀՆԱ-ի աճին բացասաբար է նպաստել գյուղատնտեսության ոլորտը՝ -1.3 տոկոսային կետով:

ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՊԱՀԱՆՋԱՐԿ

Սպառում


2018 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսների վերջնական սպառումը իրական արտահայտությամբ աճել է շուրջ 3.4%-ով և ՀՆԱ-ի աճին նպաստել է 3.1 տոկոսային կետով: 2018 թվականին մասնավոր սպառումն իրական արտահայտությամբ աճել է 5.3%-ով, մինչդեռ պետական սպառումը նվազել է 6.4%-ով՝ պայմանավորված պետական պարտքի կայունացմանն ուղղված զսպող հարկաբյուջետային քաղաքականությամբ:

Ներդրումներ

2018 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսներին կապիտալ ներդրումներն աճել են՝ պայմանավորված մասնավոր ներդրումների աճով: 2018 թվականին իրականացված կապիտալ ներդրումների 28.5% իրական աճը պայմանավորված է եղել բացառապես մասնավոր ներդրումների աճով՝ շուրջ 47.1%: Մյուս կողմից՝ նույն ժամանակահատվածում պետական ներդրումներն իրական արտահայտությամբ նվազել են 35.5%-ով:


2018թ. իրական ՀՆԱ-ի 5.2 տոկոս աճին ամենամեծ դրական նպաստումն են ունեցել ներդրումները՝ 5.4 տոկոսային կետով: Սա դրական միտում է, քանի որ ներդրումների աճը պայմաններ է ստեղծում հետագա տնտեսական աճի բարձր տեմպերի համար: Բացասաբար է նպաստել զուտ արտահանումը՝ 3.5 տոկոսային կետով՝ նախորդ տարվա 4.3%-ի փոխարեն:

Գծապատկեր 11. Համախառն ներքին արդյունք՝ ըստ ծախսային բաղադրիչների, նպաստումները 2017-2018թթ., %



ՓՈԽԱՐԺԵՔ

**Գծապատկեր 12. Անվանական փոխարժեքի միտումները 2018-2019թթ.,
կուտակային աճը, %
(աճը նշանակում է ՀՀ դրամի արժևորում)**



2019 թվականի հունվարին, նախորդ տարվա հունվարի համեմատությամբ, ՀՀ դրամն ԱՄՆ դոլարի նկատմամբ արժեզրկվել է 0.7 տոկոսով: Նույն ժամանակահատվածում եվրոյի նկատմամբ ՀՀ դրամը արժևորվել է 6.3 տոկոսով, իսկ ՌԴ ռուբլու նկատմամբ՝ 16.9 տոկոսով:


ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ

Բյուջեի եկամուտներ

2019 թվականի հունվար ամսին պետական բյուջեի ընդհանուր եկամուտները աճել են 88.3 տոկոսով, ընդ որում՝ հարկերը և տուրքերը աճել են 87.1 տոկոսով: Միասնական հաշվի մնացորդը կազմել է 40.7 մլրդ դրամ, որը 10.2 տոկոսով ավելի է նախորդ տարվա հունվարի վերջի համեմատությամբ:

Բյուջեի ծախսեր


Գծապատկեր 13. Պետական բյուջեի ծախսերի աճը և դրա բաղադրիչների նպաստումները, %



ՀՀ պետական բյուջեի ծախսերը 2019 թվականի հունվարին կազմել են 60.4 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճելով 6.5%-ով, որը մեծ մասամբ (6.7 տոկոսային կետով) պայմանավորված է ընթացիկ ծախսերի աճով: Կապիտալ ծախսերը (ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ) նույն ժամանակահատվածում նվազել են 52.4 տոկոսով:

Պետական բյուջեի պակասուրդ


Գծապատկեր 14. Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման աղբյուրների կշիռները, %



2019թ. ՀՀ պետական բյուջեի պակասուրդը կազմել է 51.9 մլրդ դրամ, որի ֆինանսավորման համար ներգրավվել է 42.5 մլրդ դրամ (պակասուրդի 81.8 տոկոսը)՝ ներքին աղբյուրների և 9.5 մլրդ դրամ (պակասուրդի 18.2 տոկոսը)՝ արտաքին աղբյուրների հաշվին:

Պետական պարտք


Գծապատկեր 15. ՀՀ կառավարության պարտքի (ԱՄՆ դոլարով) 12 ամսյա աճը, %



2019թ. հունվարի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է 6,951.0 մլն ԱՄՆ դոլար, որի 92.1 տոկոսը՝ 6,400.1 մլն ԱՄՆ դոլարը, կազմել է կառավարության պարտքը: Վերջինս 2018թ. հունվարի վերջի ցուցանիշի նկատմամբ աճել է 1.8 տոկոսով:

Գնաճը


Գծապատկեր 16. 12-ամսյա գնաճ, %



2019 թվականի հունվարին նախորդ տարվա հունվարի նկատմամբ սպառողական գներն աճել են 0.6 տոկոսով՝ նախորդ տարվա 2.9 տոկոսի համեմատ:


Փողի զանգված և բազա

Գծապատկեր 17. Փողի բազայի 12-ամսյա աճը, %



2019թ. հունվարին փողի բազայի աճի տեմպը եղել է ավելի բարձր, քան նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը: Այսպես՝ 2019թ. առաջին ամսվա դրությամբ փողի բազան նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ աճել է 9.1 տոկոսով՝ նախորդ տարվա 6.9 տոկոս աճի դիմաց:

Գծապատկեր 18. Փողի զանգվածի 12-ամսյա աճը, %




Փողի զանգվածի տասներկուամսյա աճի տեմպը 2019թ. հունվարին եղել է ավելի ցածր, քան նախորդ տարի: Փողի զանգվածի աճի տեմպը 2018-ին ունեցել է դանդաղման միտում, որը շարունակվել է նաև ընթացիկ տարում:

Ավանդներ և վարկեր


2019թ. հունվարին առևտրային բանկերի կողմից ներգրավված ավանդների ծավալների աճը 2018թ. հունվարի նկատմամբ կազմել է 13.3 տոկոս: Ավանդների ծավալների աճի տեմպը գերազանցել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածում ավանդների աճի տեմպին (2018թ. հունվարի աճը՝ 10.0%):

Գծապատկեր 19. Ավանդների 12-ամսյա աճը՝ ըստ տնտեսության հատվածների (նպաստումները), 2019թ., %



Ավանդների աճին հիմնականում նպաստել են ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդները՝ 8.5 տոկոսային կետով և տնային տնտեսություններից ներգրավված ավանդները՝ 4.2 տոկոսային կետով:

Գծապատկեր 20. Վարկերի 12 ամսյա աճը՝ ըստ տնտեսության ճյուղերի, %, 2019թ. հունվար



ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերը (արտարժույթով և ՀՀ դրամով) 2019թ. հունվարին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել են 15.1 տոկոսով, ինչին հիմնականում նպաստել են սպառողական վարկերը՝ 6.4 տոկոսային կետով և արդյունաբերության ոլորտին տրամադրված վարկերը՝ 2.2 տոկոսային կետով:

ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերը (արտարժույթով և ՀՀ դրամով) 2019թ. հունվարին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել են 15.1 տոկոսով, ինչին հիմնականում նպաստել են սպառողական վարկերը՝ 6.4 տոկոսային կետով և արդյունաբերության ոլորտին տրամադրված վարկերը՝ 2.2 տոկոսային կետով:

ԱՄՓՈՓՈՒՄ

1. Տնտեսական ակտիվության ցուցանիշը 2019թ. հունվար ամսին կազմել է 6.1 տոկոս, որը 5.5 տոկոսային կետով ավելի ցածր է, քան նախորդ տարվա աճը: Տնտեսական ակտիվության ցուցանիշի աճին առավելապես նպաստել է ծառայությունների ոլորտը (7.2 տոկոսային կետով): Աճին նպաստել են նաև առևտրի (2.3 տոկոսային կետ) և շինարարության (1.6 տոկոսային կետ) համախառն թողարկման իրական աճերը: ՏԱՑ-ի աճին բացասաբար է նպաստել արդյունաբերությունը՝ 0.1 տոկոսային կետով:

2. Համախառն ներքին արդյունքն իրական արտահայտությամբ 2018թ. չորրորդ եռամսյակում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ 2.3 տոկոսային կետով ավելի ցածր է եղել՝ կազմելով 5.2 տոկոս: 2018թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ իրական ՀՆԱ-ի 5.2 տոկոս աճին ծառայությունների ոլորտը նպաստել է 4.0 տոկոսային կետով: Դրական նպաստում ունեցող ճյուղերն են եղել նաև առևտուրը և արդյունաբերությունը՝ համապատասխանաբար 1.0 և 0.7 տոկոսային կետերով: ՀՆԱ-ի աճին բացասաբար է նպաստել գյուղատնտեսության ոլորտը՝ -1.3 տոկոսային կետով:

2018 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսներին կապիտալ ներդրումներն աճել են՝ պայմանավորված մասնավոր ներդրումների աճով: 2018 թվականին իրականացված կապիտալ ներդրումների 28.5% իրական աճը պայմանավորված է եղել բացառապես մասնավոր ներդրումների աճով՝ շուրջ 47.1%: Մյուս կողմից՝ նույն ժամանակահատվածում պետական ներդրումներն իրական արտահայտությամբ նվազել են 35.5%-ով:

3. ՀՀ պետական բյուջեի ծախսերը 2019 թվականի հունվարին կազմել են 60.4 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճելով 6.5%-ով, որը մեծ մասամբ (6.7 տոկոսային կետով) պայմանավորված է ընթացիկ ծախսերի աճով: Կապիտալ ծախսերը (ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ) նույն ժամանակահատվածում նվազել են 52.4 տոկոսով:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: